

ԱՐՎԵՍՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

«Արվեստի դասավանդումը» վերջերս առհասարակ և այսօր էլ մեծ մասամբ դիտարկվում է իբրև մի արտառոց ոլորտ, որը «համընդհանուր» կրթության հարցերի հետ գրեթե ոչ մի առընչություն չունի: Մյուս կողմից՝ «համընդհանուր» կրթության հասկացությունը խառնաշփոթ մի բան է: Իրավացի է այն պնդումը, թե մեր ժամանակներում առանց չակերտների համընդհանուր կրթություն չկա:

Փոխարենը կան անթիվ-անհամար «մասնագիտական կրթություններ», որոնք կապ չունեն ո՛չ համընդհանուր կրթության, ո՛չ էլ միմյանց հետ: Եվ այսօրվա արվեստի ուսուցումը ևս ձգտում է մասնագիտական մի կրթության, որն իր մեջ սահմանափակված է մնում բժշկի, իրավաբանի, ինժեների, մաթեմատիկոսի մասնագիտական կրթության նման:

Այս ընդհանուր իրավիճակին հակադրվում է այն հայեցողությունը, ըստ որի արվեստի դասավանդումը որպես այդպիսին առհասարակ չի կարող գոյություն ունենալ, որովհետև արվեստը ո՛չ կարելի է ուսուցանել, ո՛չ էլ սովորել. իբր արվեստը զուտ ինտուիցիայի գործ է, որն անհնար է հարկադրաբար կամ սովորեցնելով ստեղծել:

XIX դարի ազդեցիկ ժառանգությունը՝ ծայրահեղ մասնագիտացումն ու դրան հաջորդող քայքայումը, ծանրաբեռնում է մեր այսօրվա կյանքի բոլոր ոլորտները, իսկ արվեստի դասավանդման հարցերը ավելի ու ավելի խորն են մտնում փակուղի: Չարմանալի է, թե որքան քիչ հետևություններ են արվում վերջին տասնամյակների իրադարձություններից և որքան հազվադեպ է նկատվում մեծ «տեղաշարժի» ներքին իմաստի ըմբռնում:

Հետագա «զարգացման» այդ ներքին իմաստը կամ ներքին լարվածությունը պետք է դրվի յուրաքանչյուր դասավանդման հիմքում. մասնատումն աստիճանաբար կփոխարինվի *միավորումով*: «Կամ-կամ»-ը պետք է տեղ ազատի «և»-ին: Մասնագիտացումն առանց համամարդկային հիմքի այլևս անհնար է:

Յուրաքանչյուր ուսուցման մեջ այսօր, – գրեթե առանց բացառության, – բացակայում է ներքին բնույթ ունեցող «աշխարհայացքը» կամ մարդկային գործունեության իմաստի «փիլիսոփայական» հիմքը: Տարօրինակ կերպով այսօր էլ դեռ արտաքին կյանքում շատ պիտանի երիտասարդներ հնացած և ներքուստ սպանիչ ձևով են մասնագետ դառնում, սակայն շատ հազվադեպ են գուտ մարդկային արժեք ներկայացնում:

Գասավանդումը որպես կանոն բաղկացած է առանձին իմացությունների շատ կամ քիչ բռնի կուտակումից, որը երիտասարդությունը պետք է յուրացնի և որով նա իր «մասնագիտությունից» դուրս ոչինչ չի կարող ձեռնարկել: Հասկանալի է՝ տվյալ դեպքում միավորման կարողությունը, այլ կերպ ասած՝ սինթետիկ դիտարկման և մտածողության կարողությունը, մնում է այնքան անտեսված, որ մեծ մասամբ տկարանում է:

Յուրաքանչյուր դասավանդման գլխավոր նպատակը պետք է լինի մտավոր կարողության զարգացումը երկու իրարամերժ ուղղություններով՝ 1. անալիտիկ և 2. սինթետիկ:

Մենք պետք է այսպիսով շարունակենք օգտվել վերջին հարյուրամյակի ժառանգությունից (անալիզ = քայքայում) և այն միաժամանակ այնպես լրացնենք ու խորացնենք սինթետիկ մտեցումով, որ երիտասարդությունը կարողություն ձեռք բերի՝ իրարից թվացյալ հեռու ընկած ոլորտներում կենդանի, օրգանական կապ զգալու և հիմնելու (սինթեզ = միավորում):

Այնուհետև երիտասարդությունը կլքի «կամ-կամ»-ի կարծրացած մթնոլորտը և կտրվի «և»-ի ճկուն, կենդանի մթնոլորտին, – անալիզն իբրև սինթեզի միջոց: Գրանից հեշտ է հետևություն անել, որ

1. յուրաքանչյուր դաստիարակության կամ յուրաքանչյուր դասավանդման գլխավոր հիմքը միշտ նույնն է մնում,

2. այսինքն՝ արվեստի դասավանդումը յուրաքանչյուր ուրիշ դասավանդումից տարանջատված ոլորտ չէ, և

3. առաջին հերթին կարևոր է ոչ թե այն, թե *ինչ* է դասավանդվում, այլ այն, թե *ինչպես* :

3-րդ կետը չպետք է առիթ տա պարադոքսի:

Քայքայման ժամանակներում առաջացած այն սնտիապաշտությունը, իբր կան մտածողության, ինչպես նաև ստեղծագործական աշխատանքի տարբեր տեսակներ, «և»-ի տեսանկյունից կտրականապես մերժվում է. մտածողության ձևն ու ստեղծագործական աշխատանքի պրոցեսը մարդկային գործունեության տարբեր ոլորտներում չնչին իսկ չափով չեն տարբերվում իրա-

րից՝ լինի դա արվեստ, գիտություն, տեխնիկա: Չափանիշն այստեղ հետևյալն է. մասնագիտական իմացությունների մատուցման ձևը (դասավանդում) բավարարվու՞մ է արդյոք այդ իմացությունների կուտակումով, թե՞ *առաջին հերթին* փորձում է զարգացնել և փայփայել մտածողության անալիտիկ-սինթետիկ կարողության ընդունակությունը: Արվեստագետի համար ավելի արգասավոր է մտածողության հիշատակված կարողության պայմանով մասնագիտական իմացություններն օտար ոլորտից հավաքելը, քան իր մասնագիտության մեջ նեղ «կրթվելն» ու նշված մտածողության մեջ առաջվա պես անընդունակ մնալը:

Հարկ չկա շարունակել ապացուցել, որ յուրաքանչյուր «առարկայի» *իդեալական դասավանդումը* պետք է բաղկացած լիներ անքակտելիորեն իրար հետ կապված 2 մասից.

1. անալիտիկ-սինթետիկ դիտարկման, մտածողության ու գործողության դաստիարակում և

2. համապատասխան մասնագիտական իմացությունների սխտեմատիկ հաղորդում ու յուրացում:

Բնականաբար սա վերաբերում է նաև արվեստի դասավանդմանը: Արվեստը փաստորեն անհնար է սովորել, ճիշտ այնպես, ինչպես ստեղծագործական աշխատանքը և հայտնագործության ուժը գիտության մեջ կամ տեխնիկայում անկարելի է սովորեցնել կամ սովորել:

Արվեստի մեծ ժամանակաշրջանները, սակայն, միշտ իրենց «ուսմունքը» կամ «տեսությունն» ունեին, ինչը նույնքան ինքնըստիմյան հասկանալի էր իր անհրաժեշտության մեջ, որքան գիտության մեջ էր հասկանալի և է: Այդ «ուսմունքները» երբևէ չէին կարող փոխարինել ինտուիտիվի տարրը, որովհետև իմացությունն ինքնին անարգասավոր է: Այն պետք է բավարարվի նյութն ու մեթոդը մատակարարելու խնդրով: Արգասավոր է ինտուիցիան, որն այդ նյութի և այդ մեթոդի կարիքն ունի իբրև միջոցի՝ նպատակին հասնելու համար: Նպատակը, սակայն, առանց միջոցի անհասանելի է, իսկ այս իմաստով ինտուիցիան ևս անարգասավոր կլիներ:

Ոչ թե «կամ-կամ», այլ՝ «և»:

Ամեն մարդու նման արվեստագետն աշխատում է իր իմացությունների հիման վրա մտածողության իր կարողության և ինտուիտիվ պահի օգնությամբ:

Այս դեպքում ևս արվեստագետին անհնար է տարբերակել ցանկացած այլ ստեղծագործողից:

Նրա աշխատանքը օրինաչափ է և նպատակային: